

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմը հայտարարում է ներքին մրցույթ՝

Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների

կառավարման վարչության հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի

(ծածկագիր՝ 93-30.1-Մ2-6) քաղաքացիական ծառայության

թափուր պաշտոն զբաղեցնելու համար

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմը հայտարարում է **ներքին մրցույթ՝** Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 93-30.1-Մ2-6), քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 93-30.1-Մ2-6) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկավորությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ <http://armavir.mtad.am/files/docs/69432.pdf>

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 93-30.1-Մ2-6) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները դիմումները ներկայացնում են էլեկտրոնային տարբերակով: Դիմումներն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու համար անհրաժեշտ է այցելել <https://cso.gov.am> պաշտոնական կայքէջ, լրացնել նշված կայքէջի «Գլխավոր էջ»-ի «Մրցույթների հայտարարություններ» բաժնի «Ղեկավար և մասնագիտական պաշտոններ» ենթաբաժնի համապատասխան մրցույթի տողում զետեղված դիմումը, որից հետո անհրաժեշտ է լրացված դիմումին կցել անհրաժեշտ փաստաթղթերի լուսապատճենները և ներբեռնել լուսանկարը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 93-30.1-Մ2-6) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում.
2. անձնագիր և/կամ նույնականացման քարտի լուսանկար (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի կցվում, ապա անհրաժեշտ է կցել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանքի կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանքի լուսանկար),
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի(երի) լուսանկար(ներ),

4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի(ների) լուսանկար(ներ),
 5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի լուսանկար,
 6. լուսանկար՝ 3X4 չափսի:
- Մրցույթին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2023 թվականի հոկտեմբերի 5-ից 11-ը ներառյալ՝ ժամը 24.00-ն: Դիմումներն ընդունվում են քսանչորսժամյա ռեժիմով:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2023 թվականի նոյեմբերի 8-ին՝ ժամը 11:00-ին, Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Տերյան 89):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2023 թվականի նոյեմբերի 10-ին՝ ժամը 11:00-ին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի վարչական շենքում (հասցե՝ ք. Արմավիր, Աբովյան 71): Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 267071 (երկու հարյուր վաթսունյոթ հազար յոթ հարյուր մեկ) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից

- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 4, 6-11, 13, 16-21, 37, հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175823>
- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 2, 6, 9, 10, 32, 35, 36, 37, 38 հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175854>
- «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենք. Հոդվածներ՝ 5-7, 9, 12-15 հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=178970>
- «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենք հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=171966>
- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176442>
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հոդված՝ 219¹ հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151193>
- Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք, հոդվածներ՝ 9, 101 հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172330>

- ՀՀ կառավարության 17. 09. 2009 թ. «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին» N 1066-Ն որոշում

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=99416>

- ՀՀ կառավարության 12.04.2001 թ. «Պետական եվ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի եվ օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286-Ն որոշում

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=181499>

- Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2012:

հղումը՝ <http://fliphtml5.com/fumf/egdx>

- «Գրավոր խոսք», Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակություն, Լինուշ հրատարակչություն, Երևան 2012 թ., էջեր՝ 70-129,

հղումը՝ <http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf>:

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ <https://www.gov.am/am/announcements/item/346/> հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից, մասնավորապես

- «Խնդրի լուծում» կոմպետենցիա

հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf

- «Հաշվետվությունների մշակում» կոմպետենցիա

հղում՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf

- «Բարեվարքություն» կոմպետենցիա

Հղում՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/3.pdf

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ք. Արմավիր, Աբովյան 71, վարչական շենք, հեռախոսահամար՝ 0237-2-16-29, էլեկտրոնային փոստի հասցե՝ armavir.kadrer@mta.gov.am

